

Է.Մ. Սարգսյան,
Մ.Է. Առաքելյան

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՉԱՐԳԱՅՈՂ ՔԱՂԱՔԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ

Բացահայտվում են արդյունաբերական տարածքների իրացման խնդիրները զարգացած երկրներում, որը ծագել է XX դ. 70-ական թթ., ինչը կապված էր «ինդուստրիալ» հասարակությունից «հետինդուստրիալ» կամ «ինֆորմացիոն» հասարակությանն անցման հետ: Ձեռնարկությունների լուծարման կամ ծայրամասեր տեղափոխվելու հետևանքով ամբողջ քաղաքներ ու թաղամասեր լքվել և անկում են ապրել, հիմք դնելով սոցիալական և մշակութային վատթարացման: Ընդ որում, արդյունաբերական գոտիները քաղաքներում զգալի տարածքներ են զբաղեցնում և նպաստավոր տեղադիրքի շնորհիվ ունեն մեծ քաղաքաշինական ներուժ:

Առանցքային բառեր. արդյունաբերություն, հետինդուստրիալ հասարակություն, վերակառուցում, քաղաք, հուշարձան, ռենովացիա, ճարտարապետություն:

Ժամանակակից զարգացող քաղաքի կառուցվածքում վերջին տարիներին արդյունաբերական տարածքների վերականգնման խնդիրն արդիական է դարձել:

Արդյունաբերական ձեռնարկությունները քաղաքային կենտրոնի միջավայրի մեջ հատուկ անկլավներ են, ինչպես, օրինակ, ամրոցները (Կրեմլը), վանական համալիրները կամ կենդանաբանական այգիները: Դրանք յուրօրինակ քաղաքներ են քաղաքի մեջ՝ իրենց սեփական նախագծային կառուցվածքով, որը շատ քիչ կամ ընդհանրապես կապված չէ մերձակա տարածքների հետ: Նրանք ունեն շրջակայքից տարբերվող մասշտաբներ, կազմում են քաղաքի մի մասը և միաժամանակ, հարաբերական ինքնուրույնություն են ձեռք բերում: Վերակառուցման, այլընտրանքային գործառույթների ներդրման նպատակահարմարությունը պայմանավորված է սոցիալական, տնտեսական, հոգեբանական, պատմական ու գեղագիտական գործոններով: Շատ արդյունաբերական ձեռնարկություններ քաղաքի կենտրոնից տեղափոխվում են արվարձաններ: Տարածքի արդյունաբերական յուրացումից հրաժարումը էկոլոգիական վիճակի բացասական ազդեցությունը նվազեցնելու գործոններից կարևորագույնն է [1]:

Բազմաթիվ հին գործարանների նախագծերն ու տարածքային միջավայրն ավելի շատ հիշեցնում է միջնադարյան Եվրոպան: Շրջակա կառույցների հետ գործառութային և սոցիալական կապերը գրեթե բացակայում են: Բոլոր հին ձեռնարկությունները հիմնականում տարատեսակ աղտոտման աղբյուրներ են՝ սկսած աղմուկից մինչև թունավոր գազերը: Սակայն պետք է նշել, որ արդյունաբերական անցյալում կան նաև նշանավոր օբյեկտներ, որոնք

ճարտարապետական ժառանգության մի մասն են կազմում: Վերջին ժամանակներս ակտիվ միջոցներ են ձեռնարկվում նման հուշարձանների պահպանության և վիճակի բարելավման համար:

Արդյունաբերական օբյեկտների վերակառուցումը ենթադրում է մեծ գործառնությանն ներուժ ունեցող կառույցների և, հնարավորինս, մերձակա տարածքների աշխուժացում (ревитализация): Այս երևույթը անվանում են նաև - Loft (անգլ.՝ «ձեղնահարկ»), որը մի անբողջ ոճի հիմք է հանդիսացել, սակայն դրա տակ հաճախ հասկացվում է օբյեկտի գործառնության փոփոխումը՝ այն բնակելի դարձնելով: Ներքին տարածքների փոփոխությունը, որոնց ճարտարապետական-տարածական և գործառնության վիճակը չի համապատասխանում դրանց քաղաքաշինական նշանակությանը, սովորաբար չի ենթադրում ձեռնարկության վերակառուցում կամ վերականգնում: Ուստի տարածքի օգտագործման տարբերակներից մեկը տվյալ օբյեկտի ապամոնտաժումն է և այլ գործառնություն ունեցող նոր համալիրի ստեղծումը:

Պետք է հաշվի առնել, որ վերակառուցման գործընթացը շատ ծախսատար է. որպես կանոն, այն ավելի թանկ է, քան նոր շինություն կառուցելը, քանի որ ներառում է աղտոտված տարածքի բարելավում, սակայն հին օբյեկտի ապամոնտաժումը ևս կարող է բավականին թանկ արժենալ: Որպես կանոն, խնդրի լուծումը մասնավոր-պետական համագործակցության մեջ է: Այդ պատճառով նման համալիրները ներառում են կոմերցիոն բաղադրիչներ (թանկարժեք բնակարաններ, առևտուր կամ գրասենյակներ), և միայն բացառիկ դեպքերում, բյուջեից էլնելով, քաղաքը կարող է իրեն թույլ տալ անշահութաբեր որևէ նախագիծ:

Փոքր ու միջին բիզնեսի՝ արտադրական տարածքների նկատմամբ ունեցած պահանջի հետ կապված կարելի է նշել հեռանկարային մի ուղղության մասին, ինչպիսին է արդյունաբերական գոտիների վերակառուցումը՝ հետագայում կոմերցիոն նպատակներով օգտագործելու համար:

Արդյունաբերական տարածքները տարբեր գործառնություն ունեցող օբյեկտներով մեծ մակերեսներ են: Դրանք հնարավորություն են տալիս ստեղծել ընդարձակ ավտոկայանատեղիներ, որը քաղաքի կենտրոնի համար անթույլատրելի շքեղություն է: Մեկ հարթակի սահմաններում վարձակալողը կարող ձեռք բերել տարբեր գործառնություն ունեցող տարածքներ՝ պահեստ, գրասենյակ, արտադրամաս: Կան կառույցներ, օրինակ, call-կենտրոններ, data-կենտրոններ, արխիվներ, որոնք հատուկ պահանջներ են ներկայացնում տարածքների նկատմամբ (առավել հզոր էլեկտրացանց, հատուկ ջերմաստիճանային ռեժիմ և այլն): Այս տեսակետից արդյունաբերական հարթակները կրկին մրցակցությունից դուրս են. բարձր առաստաղներ, լայն սյունաշար, տանիքի մեծ ամրություն. այս բոլոր առանձնահատկությունները թույլ են տալիս տարածքը կազմակերպել նման համակարգերի հաջող գործունեության համար:

Գլխավոր խնդիրը ոչ թե շահույթն է (որպես վերակառուցման արդյունք), այլ «կորստի ենթարկված» արդյունաբերական տարածքների ինտեգրումը և քաղաքային միջավայրում մեջ դրանց ներառումը: Հարցեր են առաջանում. ի՞նչ նոր գործառնություն կարող են կատարել


արդյունաբերական շենքերն ու տարածքները: Արդյո՞ք դրանք դատապարտված են քաղաքից մեկուսացված լինելուն: Արդյո՞ք պահպանում են կանոնակարգված տարածքների (gated community) իրենց կարգավիճակը, անգամ եթե դրանք վերափոխվում են բնակելի կամ գործարար համալիրների: Թե դրանք կարող են դառնալ քաղաքի լիարժեք մի մասը: Կարելի է՞ արդյոք կարճ ժամանակում վերաստեղծել քաղաքային հյուսվածքը, թե դա երկարատև ջանքեր է պահանջում:

Երբ գործ ունենք նման տարածքների հետ, անխուսափելի է այն հարցը, թե այդ տարածքում ինչն է ենթակա պահպանմանը և ինչու, թե ինչ է հուշարձանը, ինչն է հուշարձանի մեջ արժեքավոր համարվում: Ինչպե՞ս է փոխվում հուշարձանի իմաստը, եթե փոխվում է այն ստեղծող կոնտեքստը: Հին արդյունաբերական շինություններից շատերը հատուկ պահպանվում են որպես ճարտարապետության հուշարձաններ, իսկ շատերը, չնայած նրան, որ հուշարձան չեն, անկասկած, ճարտարապետական արժեք են ներկայացնում, գտնվում են լավ վիճակում և պիտանի են նոր գործառույթների տեղադրման համար (գրասենյակների, առևտրի, մշակութային ու ժամանցային հաստատությունների, բնակարանների): Արդյունաբերական ճարտարապետության նկատմամբ վերաբերմունքը զգալիորեն փոխվել է վերջին տասնամյակների ընթացքում. 70-ականներին մերժումից ու ընդհանուր ապամոնտաժումից մինչև թանգարանացումը 90-ականներին:

Ռենովացիոն գործընթացի մեթոդները բացահայտելու համար անհրաժեշտ է վերլուծել իրավիճակն ամբողջ աշխարհում:

Արևմտյան հետինդուստրիալ հասարակությունն իր արժեքներում դառնում է ավելի ու ավելի պահպանողական, ավելի մեծ պատասխանատվություն է կրում շրջակա միջավայրի և սահմանափակ բնական ռեսուրսների պահպանման հարցում և միաժամանակ, ավելի մեծ ուշադրություն է դարձնում անցյալի հիշատակին: Նման վերաբերմունքը կարևոր նախապայման է, որպեսզի իրենց առաջնային նշանակությունը կորցրած շենքերին «երկրորդ կյանք» պարգևեն:

Արևելյան Եվրոպայում վերակառուցման առավել հետաքրքիր օրինակներից է հայտնի լոճյան արտադրող Իգրայիլ Պոզնանսկու նախկին մանուֆակտուրային գործարանը (նկ. 1), որը գտնվում էր Լոձ քաղաքում (Լեհաստան) [2]: 19-րդ դ. կեսերին Իգրայիլը իր հորից, ով խոշոր լոճյան մանածագործական ապրանքների առևտրական էր, ժառանգություն ստացավ և բազմապատկեց այն: Դրանից հետո Իգրայիլը Լեհաստանում հիմնեց բամբակյա արտադրանքի գործարան, ուր աշխատում էր շուրջ տասը հազար աշխատող: Գործարանի չափերի մասին կարելի է դատել պատմական տվյալներից ելնելով, որոնց համաձայն 19-րդ դ. վերջին գործարանը զբաղեցնում էր 30 հա տարածք:



Նկ. 1. Գործարանի ընդհանուր տեսքը 19-րդ դարի վերջում

Վերակառուցումից հետո Մանուֆակտուրան դարձավ խոշոր առևտրի և զվարճանքի կենտրոն ոչ միայն Լեհաստանում (նկ. 2), այլև ամբողջ Կենտրոնական Եվրոպայում: Ստեղծված լավ մարկետինգի շնորհիվ Մանուֆակտուրան համարվում է արդյունաբերական օբյեկտների վերականգման ամենահաջողված նախագծերից մեկը: Ընդհանուր 110 000 մ² տարածք ունեցող համալիրը, որն ընդգրկում է 300 կոնցեպտուալ տարածքներ, դարձավ փոքր Լոձ քաղաքի մշակութային գլխավոր տեսարժան վայրը:



Նկ. 2. Գործարանի ընդհանուր տեսքը վերակառուցումից հետո

Հիմնականում Մանուֆակտուրան համարվում է հանգստի և զվարճանքի կենտրոն, որը ներառում է 15 սրահներով կինոթատրոն՝ ներառյալ 3D սրահը, գլորաչմուշկ, սքեյթ պարկ, պատ մագլցման համար, բուլինգ, լազերային խաղերի մրցարան և այլ հետաքրքիր մշակութային և ժամանցային հաստատություններ: Գործարանի տարածքում կարելի է հաճախել մի քանի թանգարաններ (Լոձ քաղաքի թանգարան, Գործարանների և ժամանակակից «M52» արվեստի թանգարան), ինչպես նաև թատրոն: Նախկին արդյունաբերական համալիրի վերակառուցման և ճիշտ դիրքորոշման շնորհիվ Լոձ քաղաքը դարձավ Լեհաստանի ամենահայտնի տուրիստական կենտրոններից մեկը:

Վերակառուցման առումով Մեծ Բրիտանիան հայտնի է Յորքշիր կոմսության խոշոր քաղաքների հին արդյունաբերական թաղամասերով՝ Հադերսֆիլդ [3], Շեֆիլդ և Լիդս, որոնք

վերակառուցման են ենթարկվել ճարտարապետական և դիզայներական միջոցների լայն օգտագործման շնորհիվ (նկ. 3,4): Հին արդյունաբերական թաղամասերի թարմացման ծրագրերը մշակվել են քաղաքային իշխանությունների (City Council) նախաձեռնությամբ, որին հավանություն են տվել նաև առևտրային կազմակերպությունները, որոնք հետաքրքրված էին «լքված» տարածքների յուրացմամբ:



Նկ. 3. Վերակառուցման ընթացքը



Նկ. 4. Թաղամասի տեսքը վերակառուցումից առաջ

Լիդս քաղաքի Հոլբեկ թաղամասն անվանում են «ուրբանիզացված գյուղ»: Ծրագիրը մշակվում էր քաղաքային իշխանությունների կողմից՝ Յորքշիրի՝ Yorkshire Forward խոշոր կազմակերպության աջակցությամբ, որը զբաղվում էր անշարժ գույքի կառավարմամբ: Այդ ծրագրի մասին խոսելով՝ հարկ է նշել հետևյալը:

Առաջին՝ բրիտանական մոտեցումը ծրագրին՝ ճարտարապետության և դիզայնի մեջ համատեղել սովորույթները և մշակութային-պատմական ժառանգությունը վառ նորարարության հետ:

Երկրորդ՝ խելամիտ գործարարություն և խորամանկ հաշվարկ: Մարկետոլոգների կողմից հաշվարկվել է, որ լքված, «կեղտոտ» արտադրությունների և քաղաքային տարածքների թարմացման արդյունքում հնարավոր է վերականգնել միայն մանր և միջին ձեռնարկությունները, որոնք ուղղված են մտավոր ապրանքների ստեղծմանը:

Երրորդ՝ հաջողությամբ գտնված թարմացվող տարածքների մասնաբաժինները:

Յորքշիրի մասնագետները պայմանականորեն յուրաքանչյուր ենթաթաղամաս բաժանել են երեք գործառական մասի: Որոշվել է հին մասնաշենքերը վերադիտարկել որպես ճարտարապետական, դիզայներական, գեղարվեստական ստուդիաներ և արվեստանոցներ, բրոկերային, ֆինանսական և խորհրդատվական կազմակերպություններ և այնտեղ տեղադրել ոչ մեծ պատկերասրահներ և տեղեկատվական կենտրոններ (նկ. 5):



Նկ. 5. Ընդհանուր տեսքը վերակառուցումից հետո

Տարածքի մյուս մասում հանձնարարված էր կառուցել բարձրորակ կացարաններ՝ զարգացած սերվերային ենթակառուցվածքներով, որը ներառում է մանկապարտեզներ և կայանատեղիներ: Եվ վերջապես բրիտանացիները չեն մոռացել հասարակական վայրերի մասին, այնպիսիք, ինչպիսիք են ակումբները, ռեստորանները, փաբերը և բացօթյա սրճարանները, որոնք զբաղեցնում էին տարածքի մեկ երրորդը: Նախկին արդյունաբերական շինությունների բոլոր արտեֆակտերը՝ լքված վիադուկներն ու թունելները, չօգտագործված գետերի ուղիները, թարմացված տեսքով համարվում են Հոլբեկի ենթական միջավայրի անօտարելի բաղկացուցիչները:

Տպավորիչ է այն, որ ճարտարապետը հնարամտորեն համատեղում է Անգլիայի համար ավանդական կարմիր աղյուսը և կոշտ սալիկները ժամանակակից մետաղների և ապակե թերթիկների հետ: Ուրբանացված Հոլբեկ գյուղի կոմպոզիցիոն կենտրոնը համարվում է հսկայական գրասենյակային շինություն ատրումով, որի ներսում գտնվում է վեր ձգվող, շատ դինամիկ մի քանդակ, որը խորհրդանշում է Յորքշիրի ձգտումը դեպի նորարարություն ոչ միայն ճարտարապետության և դիզայնի, այլև հասարակության մեջ:

Ոչ պակաս հայտնի, սակայն կոմերցիոն նման հաջողություններ չունեցող մի նախագիծ կա [4], որը գտնվում է Մեծ Բրիտանիայում, Հարավային Յորքշիր կոմսության Շեֆֆիլդ քաղաքում գտնվող արդյունաբերական համալիրի տարածքում (նկ. 6): Ստեղծվել է այսպես կոչված Մշակութային ինդուստրիաների Շեֆֆիլդյան թաղամասը, որտեղ գտնվում են մոտ 300 ստեղծագործական ընկերություններ, որոնք մասնագիտացված են կինոյի, երաժշտության, հեռուստատեսության, դիզայնի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Լքված արդյունաբերական շրջանն առաջին անգամ Մշակութային ինդուստրիաների թաղամաս անվանվեց 1986թ.: 30 հա մակերես ունեցող տարածքում տեղաբաշխված է եղել մեքենաշինական գործարան, մի քանի հնացած պողպատաձուլական գործարաններ ու հետպատերազմյան փլատակներ: Լքված մետաղաձուլական գործարանի տեղում հիմնադրվել է Յորքշիրյան մշակութային տարածության Նկարիչների միությունը:



Նկ. 6. Արդյունաբերական համալիրի տեսքը վերակառուցումից առաջ


Այժմ Մշակութային ինդուստրիաների թաղամասը ներառում է Ձեռներեցության ասուղի-տեսողական կենտրոնը, Leadmill գիշերային ակումբը, Կառավարման ստուդիան, Sheffield Գիշերային զբոսայգին, Site Photography պատկերասրահը և կինոդահլիճների մի համալիր (նկ.7): Cultural Industries Quarter-ը, չնայած իր հանրաճանաչությանը, մինչ օրս ֆինանսավորում է ստանում քաղաքային բյուջեից:




Նկ. 7. Արդյունաբերական համալիրի տեսքը վերակառուցումից առաջ

Արդյունաբերական շրջանի լիարժեք ու հաջողված վերափոխման ամենահայտնի օրինակը, թերևս, լոնդոնյան դոքերի պատմությունն է: Դոքերը հայտնվել են դեռևս XVII դ. վերջում, որպես նավերի համար պահպանվող տարածք [3] և երկար ժամանակ դրանք քաղաքի ամենաաշխույժ հատվածներն են եղել, որտեղ կենտրոնացած էր կոմերցիոն ակտիվությունը: Սակայն XX դ.

Արևելյան Անգլիայում կոնտեյներային կոմունիկացիաների զարգացման հետ կապված լոնդոնյան նավահանգստի բեռնաշրջանառությունը կտրուկ նվազեց:



ա



բ

Նկ. 8. Դոքերի քարտեզը. ա- XVII դ., բ- XX դ.

1972թ. այն կորցրեց երկրում խոշորագույն նավահանգստի իր կարգավիճակը: 1980թ. Լոնդոնում բոլոր դոքերը փակվեցին: Դրան գումարվեց նաև արդյունաբերության ավանդական ճյուղերի անկումը, որոնք նույնպես ներկայացված էին լոնդոնյան դոքերում (նկ.8): Պարզ դարձավ, որ նոր պայմաններում թաղամասը նախկին վիճակում գոյություն ունենալ չէր կարող, և Մարգարետ Թեչչերի վարչակարգը որոշում կայացրեց դոքերի ու պահեստների գոտու կենտրոնում կառուցել նոր գործարար թաղամաս, որը կոչված էր մրցակցելու Միթիի հետ:

1981թ. կազմակերպվել է LDDC (London Docklands Development Corporation) Դոքերի զարգացման Կորպորացիան, որի պարտականությունների մեջ մտնում էր թաղամասի վերանախագծումն ու վերակառուցումը: Այդ ժամանակ թաղամասը ժապավենային

կառուցապատմամբ անշուք բարձրահարկ շենքերի ու տների մի շարք էր: Զգացվում էր խանութների ու հանգստյան վայրերի խիստ պակաս:



Նկ. 9. Դռքերը վերակառուցումից առաջ

Լոնդոնյան դռքերի 18 պահպանվող տարածքների կարևորությունը պայմանավորում էր նոր կառուցապատման այնպիսի պահանջներ, ինչպես, օրինակ, տվյալ տարածքին բնորոշ բարձրություններին, զանգվածներին, նյութերի տեսակին ու գույնին, կառուցապատմանը համապատասխան լինելու անհրաժեշտությունը:

Դռքերն ունեին բազմաթիվ ընդարձակ տարածքներ, որոնք հիմնավոր նախագծային մշակման կարիք ունեին (նկ. 9) : Նման վայրերը նոր քաղաքային թաղամասեր դառնալու մեծ ներուժ ունեին: LDDC կորպորացիան այլ ընկերությունների հետ համատեղ մշակել է զարգացման յուրաքանչյուր գոտու համար հատուկ կառույցներ:

Վերակառուցման ընթացքում ստեղծվել են բազմաթիվ հետիոտնային և հեծանվային մայրքեր ու ճանապարհներ, որոնք ապահովում են ելքը դեպի գետը, վերգետնյա հետիոտնային անցումներ, զբոսայգիներ, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի առաջին թռչունների արգելավայրը (նկ. 10): Նորացված Դոքլենդսը բազմաթիվ մրցանակների է արժանացել ճարտարապետության ու նախագծման բնագավառներում: 1987 թ. բացվել է Դոքլենդյան թեթև մետրոն (Docklands Light Railway) և London-City օդանավակայանը:



Նկ. 10. Դռքերը վերակառուցումից հետո

Ազգային կառավարության կողմից տրամադրված միջոցներով տարածքի տնտեսական վերակառուցման շրջանակներում 1982թ. բացվել է Isle of Dogs հատուկ տնտեսական գոտին,

որի ստեղծումը ենթադրում էր տարածքի զարգացման երաշխիքների տրամադրում, հարկերի նվազեցում և այլ գործողություններ, որոնց նպատակն էր մասնավոր ձեռներեցության խրախուսումը:

Խոշորագույն ընկերությունները ներգրավվել են երկնաքերերի, օրինակ, One Canada Square 244 մետրանոց աշտարակի կառուցման համար, որը մինչև 2010թ. Մեծ Բրիտանիայի ամենաբարձր շինությունն էր: Ենթադրվում էր, որ զարգացող Դոքլենդսն իր հետևից կտանի քաղաքի մերձակա թաղամասերը, ինչը և տեղի ունեցավ:

Վերակառուցման ընթացքում թաղամասի բնակչության շրջանում նվազեց գործազրկությունը, այստեղ ներգրավվեցին ֆինանսական և բարձր տեխնոլոգիաների ընկերություններ, One Canada Square բիզնես-կենտրոնում կամ, ինչպես այն անվանում են Լոնդոնի բնակիչներն ըստ դրա աշխարհագրական դիրքի՝ Քենարի-Ուորֆում, տեղաբաշխված են «Գարդիան», «Դեյլի Թեյլեգրաֆ» և «Դեյլի Միրրոր» թերթերի խմբագրությունները: Կառուցվել են ավելի քան 20 հազար նոր տներ, որտեղ հիմնականում ապրում են հենց սեփականատերերը, այլ ոչ թե վարձակալողները, ինչպես նախկինում: Բացի կացարաններից կառուցվել են մի քանի խոշոր առևտրի կենտրոններ, ռեստորաններ, բարեր ու սրճարաններ, ինչպես նաև ջրային սպորտաձևերի կենտրոն (նկ. 11):



Նկ. 11. Վերակառուցված թաղամասը տարբեր դիրքերից

Այսպիսով, քաղաքաշինության ու ճարտարապետական նախագծման արտասահմանյան օրինակներով դիտարկվեցին գոյություն ունեցող պատմական արդյունաբերական կառուցապատման մեջ նոր ճարտարապետական տարրերի ներմուծման տարբերակները: Տարբեր են մոտեցումները, և դրանցից շատերը հաջողված են ու արդարացված: Արդյունաբերական տարածքների վերակառուցման քաղաքականությունն արդիական է նաև մեր քաղաքի համար: Անցած դարերում կառուցված գործարանների ու ֆաբրիկաների որոշ շենքեր այսօր գտնվում են ծայրահեղ բարձիթողի վիճակում, միաժամանակ լինելով ճարտարապետության հուշարձաններ: Առանց ներդրումային միջոցների բոլոր հուշարձաններին նախնական տեսքը հաղորդելն այսօր գրեթե անհնար է, ուստի այդ

պատճառով քաղաքը մեծ հույսեր է կապում պատմական շինությունները վարձակալողների ու սեփականատերերի հետ: Նորի ստեղծման և արդյունաբերական շինությունների վերաիմաստավորման քաղաքականությունը կրերի միջոցների հոսքին, ներդրողներին, հնարավոր կդարձնի հուշարձանների վերակառուցումն ու պահպանումը:

**Э.М. Саргсян,
М.Э. Аракелян**

ЗАДАЧИ ОСВОЕНИЯ ПРОМЫШЛЕННЫХ ЗОН В СТРУКТУРЕ РАЗВИВАЮЩЕГОСЯ ГОРОДА

Раскрываются проблемы освоения промышленных зон в развитых странах, которые возникли в 70-ые гг. XX в., что было связано с переходом от «индустриального» общества к «постиндустриальному» или «информационному». Из-за ликвидации предприятий или перемещения в пригород, целые города и районы были покинуты и пришли в упадок, порождая социальную и культурную деградацию. Вместе с тем, благодаря внушительным территориям и благоприятному расположению, промышленные зоны в городах имеют большой градостроительный потенциал.

Ключевые слова: промышленная, индустриальная, постиндустриальная, реконструкции, город, памятник, реновация, архитектура.

**E.M. Sargsyan,
M.E. Arakelyan**

THE PROBLEM OF UTILIZING THE INDUSTRIAL AREAS IN THE STRUCTURE OF DEVELOPED CITIES

The article reveals the issues of reusing the industrial zones in cities located in developed countries. The problem originated in the 1970`s, the decade of the transition between the industrial and postindustrial societies. Due to the liquidation of business facilities and the movement of the population to the suburbs, entire cities and districts were abandoned, thus giving a rise to social and cultural degradation. Meanwhile the industrial zones occupy large areas, and they have a big architectural potential because of their favorable location.

Keywords: manufacturing, industrial, post-industrial, reconstruction, city, monument, renovation, architecture.

Գրականություն

1. **Мастерская** экспериментального учебного проектирования/ МАРХИ. - URL: archclass.ru.
2. **Ревитализация** промышленных предприятий или вторая жизнь для завода/ Клуб инфицированных будущим «Trend club». - URL: trendclub.ru.
3. **Holbeck** Urban Village. - URL: www.holbeckurbanvillage.co.uk.
4. **Новая** жизнь мертвых кварталов// Электронный ресурс «Эксперт». - URL: expert.ru.

Աշխատանքն իրականացված է ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ «ՀՀ ճարտարապետական և շինարարական համալիրների կայուն զարգացման ուղիների բացահայտում, ճշգրտում, ներդրման առաջարկությունների և հանձնարարականների մշակում՝ մշտական մոնիտորինգի կիրառմամբ» ծրագրի շրջանակներում:

Մարգարյան Էմիլիա Մկրտչի, Ճ.թ., պրոֆ. (ՀՀ, ք.Երևան)-ՃՇՀԱՀ, ակադեմիկոս Ալ. Թամանյանի անվ. ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, գ.ա., ճարտարապետական նախագծման և ճարտարապետական միջավայրի դիզայնի ամբիոն, (091)494420, milushik@mail.ru: Առաքելյան Մերուժան Էդուարդի (ՀՀ, ք.Երևան)-ՃՇՀԱՀ, ճարտարապետական նախագծման և ճարտարապետական միջավայրի դիզայնի ամբիոն, հայցորդ, (091)613919, meruj2010@yandex.ru.

Саргсян Эмилия Мкртичевна, канд. архит., проф. (РА, г.Ереван) - НУАСА, проблемная лаборатория Архитектуры и строительства им. академика Ал. Таманяна, н.с., кафедра Архитектурного проектирования и дизайна архитектурной среды. (091)494420, milushik@mail.ru. Аракелян Меружан Эдуардович (РА, г.Ереван) - НУАСА, кафедра Архитектурного проектирования и дизайна архитектурной среды, соискатель, (091)613919, meruj2010@yandex.ru.

Sargsyan Emilia Mkrtych, doctor of philosophy (Ph.D.) in Architecture, prof. (RA, Yerevan)- NUACA, Research Laboratory of Architecture and Building by Academician Al. Tamanyan, Scientific Researcher, the Chair of Architecture Drafting and Design of Architectural Environment. (091)494420, milushik@mail.ru. Arakelyan Meruzhan Eduard (RA, Yerevan)- NUACA, the Chair of Architecture Drafting and Design of Architectural Environment, applicant, (091)613919, meruj2010@yandex.ru.

Ներկայացվել է՝ 11.12.2013թ.

Ընդունվել է տպագրության՝ 18.12.2013թ.